ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 153 - Ա

«ԳԼՈԲԱԼ ԷՅԴ ՆԵԹՎՈՐՔ (ԳԷՅՆ)» ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից՝ «Գլոբալ Էյդ Նեթվորք» ոչ առևտրային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷՅՆ)» ոչ առևտրային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռի (720 տեղ, 13,039 կգ ընդհանուր քաշով, 31,030 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,008 եվրո, բեռի և բաշխման ցանկը համաձայն հավելվածի, Արևելյան մաքսատուն-վարչություն) ներմուծման և անհատուց բաշխման ծրագիրը:

2. «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷՅՆ)» ոչ առևտրային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003

թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

01.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ